

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/5**

**9 փետրվարի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Անի Հովհաննիսյանի 28.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.12.2015 թ-ի թիվ 307797/08 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Անի Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Անի Հովհաննիսյանը հայտնում է, որ 09.09.2015 թ-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր, բայց հարկային տեսչությունում փաստացի գործունեությունը սկսելու կամ դադարեցնելու վերաբերյալ չի ներկայացրել, փաստացի գործունեություն չի իրականացրել և երրորդ եռամսյակի համար հաշվետվություններ, այդ թվում՝ զրոյական, չի ներկայացրել: Փաստացի գործունեություն սկսել է իրականացնել 01.10.2015 թ-ից: Սակայն, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.12.2015թ-ի թիվ 307797/08 որոշմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ա/Ձ Անի Հովհաննիսյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.12.2015 թ-ի թիվ 307797/08 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 15.12.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1541 արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Անի Հովհաննիսյանը հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետից ուշ է ներկայացրել հարկային մարմին:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 22.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 307797/08 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Անի Հովհաննիսյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Որոշման կազմման վերաբերյալ նախ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-ին մասի համաձայն. «Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում»:

Նույն օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը»:

Տվյալ դեպքում Որոշման մեջ ընդամենը նշված է, որ Ա/Ձ Անի Հովհաննիսյանը հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել հարկային մարմին: Սակայն, Որոշման մեջ նշված չէ, թե վարչական տույժը կոնկրետ որ ժամանակահատվածի և որ հաշվետվությունները չներկայացվելու համար է սահմանվել:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Անի Հովհաննիսյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել 2015 թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար: Պարզվեց նաև, որ Անի Հովհաննիսյանը 09.09.2015 թ-ին հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր և 28.09.2015 թ-ին ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու մասին հայտարարություն: Ա/Ձ Անի Հովհաննիսյանը 28.09.2015 թ-ին ներկայացրել է նաև հայտարարություն՝ 01.10.2015 թ-ից փաստացի գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Անի Հովհաննիսյանը 2015 թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի կրել, հետևյալ պատճառաբանությամբ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ քննարկվող դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 9 պաշտոնական պարզաբանման դրույթներով, որի 4-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը (կազմակերպության, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում:


Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Անի Հովհաննիսյանը փաստացի գործունեություն չիրականացնելու ժամանակահատվածի համար (2015 թ-ի 3-րդ եռամսյակ) շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ռ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.12.2015 թ-ի թիվ 307797/08 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ